

րևան, և թէ՛ երբօր իրարու վրայ զարկած ըլլան :

Մ. յս եկեղեցւոյս ներքին լոյսը յարկին վրայի հինգ պատուհանէ գալով, որոնք բոլորչի ձևով ներս ինձած ըլլալնուն զրտէն չեն երևնար, ամենևին պատերը լոյս չեն տեսներ : Սրայի ծածքը երկրթով և պղնձով պատած է, անանկ որ բթաչափ մը փայտ չես գտներ բոլոր շէնքին մէջ : Շրջաքանդակը, բաց ՚ի լատիներէն արձանագրու թեան տեղէն, հրեշտակներով, գրասանգներով, գրնտաձև խորաքանդակներով ու վարդաձև զարդերով, և այլն, բոլորած է : Իսկ առջևի մեծ և եռանկիւնի ճակատին վրայ ընդարձակ բարձրաքանդակ մը կայ, որ այլաբանական պատկերքներով Մագդաղէնացւոյն զղջալէն առաջ և ետքի պատմութիւնը կը ներկայացնէ : Մ. յս բարձրաքանդակը, որ թերևս այս տեսակներուն մէջ մեծագոյնն ըլլայ, շատ պարսաւողներ ունեցաւ, բայց այսու ամենայնիւ մեծագործ բան է, և այս պատճառաւ նաև արժանաւոր այսպիսի հոյակապ և գեղեցիկ շէնքի մը : Մ. յս գարապէս խոստովանելու է՝ որ թէպէտ այս քանդակը թերութիւններ ունի, բայց ուրիշ այնչափ կատարելութիւնները՝ իր հեղինակը, որ է Ղլմէր, Վաղղիոյ ամենէն ճարտարարուեստ քանդակագործներէն մէկը կրնան սեպել տալ :

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ՃԱՐՏԱՐՈՒԹԻՒՆ

Ե. Կենդանաց սատակներուն ուրիշ մնացած մասերուն պատրաստութիւնն ու գործածութիւնը : (Երև 58)

Մշտ՝ . Արկայն ու շիտակ աղիքները, նոյնպէս կարճերն ալ, որ եզներէն, կովերէն, խոյերէն, ձիերէն կը հանեն, շատ բանի կու գան . զասոնք փշելով ուռեցուցած կամ առանց փշելու չորցուցած այլ և այլ տեղուանք կը խաւրեն .

1 ՏՃ. Գ-ըււււււ :

ու զառեկագործները՝ կը բանեցնեն, նուագարաններու լար կ'ըլլան, մեքենաներու շուան, վարմ² ու խարազան³ ու ասուեգործներուն՝ գործիքին համար ամուր շուան :

Այրք կենդանի մը կը մեռնի, մորթը վրայէն հանելէն վերջը՝ ինչ կերպով որ առաջ ըսինք, պէտք է մէկէն աղիքները պարպել և պաղ ջրոյ մէջ աղէկ մը լուանալ . ետքը աղեաց վրայ մնացած ճարպը դանակով մը քերթել զգուշութեամբ որ աղիքները չկտրտին : Մ. յս գործողութիւնս մեծ աղեաց վրայ դիւրաւ ընելու համար, գետնին վրայ 6 ոտք բարձր գաւազան մը կը տնկես, ու մեծ աղիքը 4, 5 ոտք երկայնութեամբ գաւազանին վրան կ'անցնես, և այնպէս աղեաց այդ անցուցած մասին վրայի ճարպը քերթելէդ ետքը, զանիկայ վարքաշելով՝ գաւազանին վրայ կը բերես անկից ետևի մասը, և այսպէս հետ զհետէ մնացած մասերն ալ, ինչուան որ ամբողջ նոյն աղիքը մաքրուի : Ատքը նորէն կը լուաս ու մէկ ծայրէն սկսած երկու մասուրներուդ մէջէն անցնելով կը սխմես, որպէս զի կարելի եղածին չափ վրայէն ջուրն ելլայ, ու շուաններէ կախած չորցնելու կը փոխես : Այրք կէս մը կը չորնան, գոյ խուցի մը մէջ վառած ծծմբոյ շոգւոյն կը դնես, ինչպէս որ ուրիշ յօդուածի մէջ ըսինք ուրիշ մասանց համար . ետքը նորէն կը կախես, որպէս զի բոլորովին չորնան, ու դեռ քանի որ առաձգական են՝ կը պլլես ու կրկին անգամ ծծմբոյ շոգի կը ծխես, և այդ գործողութենէն վերջը սնտուկներու մէջ կը տեղաւորես հեռու տեղուանք խաւրելու համար :

Իտլոր ընդերքը՝ ու անոնց կտուրուանքները, նոյնպէս ջրոտ միօր և բոլոր ախոնդանքը՝, աղտեղութիւնները միայն ՚ի բաց առեալ, օգտակար կ'ըլլան ամբողջ ամառուան մէջ, մանաւանդ ձկնորս եղած տեղուանք, վրանին սպիտակ որդ ըսուած ճճիներուն գոյանա-

1 ՏՃ. վ-ըւււււ : 4 ՏՃ. Հ-ոււ :
2 ՏՃ. Բ-ըւււ : 5 ՏՃ. Գ-ըւււ Է-Է :
3 ՏՃ. Ք-ըւււ : 6 ՏՃ. Գ-ըւււ Է :

լովը . որովհետև ձկնորսները ատ վիճա-
կի մէջ եղած ախոնդանաց կտորուանքը
ձուկ որսալու համար իրենց կարծին
կ'անցընեն , և կամ այնպիսի անձինք կը
գործածեն՝ որոնք իրենց տանը մէջ փա-
սիան կամ ձուկ կը սնուցանեն , որով
աս գոյացութիւնս շատ կը փնտռուի ու
կըքուի . իսկ այդ որդերը մասնաւորա-
պէս հաւերու կը տրուին , բայց լաւ մտա-
դրութիւն ընելու է նոյն միջոցին՝ որ
փոխն ՚ի փոխ բանջարեղէն կեր տալու
չմոռցուի . այս կերակուրս մասնաւոր
կերպով հնգկահաւերու , վառեակնե-
րու՝ և ամէն տեսակ հաւեղինաց պզտի
ձագեր մեծցընելու ու գիրացընելու լաւ
կը ծառայէ , և աւելի օգտակար կերպով
այս բանիս համար գործածուող միջեան
հաւկիթներու պաշտօնը կը կատարեն .
ասկէց զատ նաև կաքաւու ձագերը՝ ,
լորամարգիի՝ ձագերը , սոխակները՝ ու
ասոնց նման պզտի թռչուններ սնուցա-
նելու ալ կը գործածուի : (Բարիզու մօտ
Սոնֆորձոն ըսուած տեղը այս հետևեալ
կերպովս այդ որդերուն գոյանալը կը դի-
րացընեն . գետնին վրայ ազբի , աղեաց
կտորուանքներու և ուրիշ ախոնդանաց
դէզ մը կ'ընեն 5 , 6 բթաչափ թանձրու-
թեամբ , ու վրան թէթև կերպով ու
քիչ յարդով կը ծածկեն , այնչափ որ
այդ կենդանական գոյացութեց վրայի
երեսը արևուն սաստիկ ջերմութենէն
պահպանուի : (ուս մը ձանձերը հո-
տը առնելով՝ յարդին վրայ կը ժողո-
վին , ուսկից անցնելով՝ կ'երթան այդ
կենդանական գոյացութեանց վրայ ի-
րենց հաւկիթը ձգելու : Վանի մը օ-
րէն վերջը այդ տարածած գոյացութիւ-
նը՝ որդերու դէզ մը կը դաւնայ փտտած
քակորի՝ նման կտորուանքներով խառ-
նուած . ետքը այդ որդերը զատելով
պարկերու մէջ կը լեցընեն ու ուրիշ տե-
ղուանք կը խաւրեն կը ծախեն :

Իսկ ձկնորսները տեղ տեղ ասկէց
խիստ շատ կը գործածեն ու սուղ սուղ
կը գնեն : (Շատ օգտակար է այս որդե-

1 ՏՃ. փիւճ : 3 ՏՃ. Պււււււււ :
2 Գ.Ղ. Perdreau. ՏՃ. 4 ՏՃ. Պիւււիււ :
Բեւեւիււ եւււււււ : 5 ՏՃ. Փւււււ :

րէն աւազաններու մէջ մեծցուցած ձրկ-
ներու կեր տալը , որովհետև ասով թէ
լաւ կը գիրնան և թէ շուտ կը մեծնան
ձկները , որով երկու կամ իրեք անգամ
աւելի ձուկ կրնաս ունենալ աւազանիդ
մէջ . իսկ շահդ ութը կամ տասը ան-
գամ աւելի , որովհետև սննդարար ու-
տելեաց պակասութիւնը միայն ձկնե-
րուն թիւը կը քիչցընէ , թէ և մէջեր-
նին ձուկ կլլող ալ չգտուի :

Չփանքերէ՝ ու Տարբերա- կարգաւոր-
ներէ սոսիւն՝ շինելու կերպը . Սոսիւն շի-
նելը շատ դիւրին գործողութիւն մըն է
և միանգամայն շատ շահաւոր՝ գործա-
ծութիւնը յաճախեալ ըլլալուն հա-
մար : — Կրաջրոյ մէջ կը թաթխեն աս
վերոյիշեալ գոյացութիւններս , կամ
կենդանիէն հանածին պէս և կամ թէ
վերը նշանակած կերպերովս չորցընելն
ետև . իսկ կրաջրոյ բաղադրութիւնը
պէտք է ըլլայ 1 հոխա չմարած կիր ,
50 հոխա ջրոյ հետ . ամիս մը ամէն ու-
թը օրը մէյ մը կրաջուրը կը նորոգեն , և
մէկ ամիսը անցնելէն վերջը՝ ձմեռը ա-
միսը մէյ մը , իսկ ամառը՝ ամիսը երկու
հեղ : (այդ կրաջուրը թէ որ ըսածիս
կէսէն աւելի տկար պատրաստելու ըլ-
լաս , այսինքն 1 հոխա կրին՝ 100 հոխա
ջուր դնելով , այդ գոյացութիւնները ա-
ւելի երկար կը պահուին , ու ինչուան
յարմար եղանակը կրնամ սպասել . և
կամ թէ քանակութիւնդ քիչ ըլլայ ու
քիչ մը շատկեկ ուզենաս ժողովել ու
այնպէս գործողութեանդ ձեռք զար-
նել , ինչուան տարի մը կրնաս այն ջրոյն
մէջ թողուլ . բայց այս ալ գիտնաս որ՝
եթէ ուզենաս , երկրորդ ամսուն մէջ
կրնաս շինելու ձեռք զարնել :

Երբոր կ'ուզես սոսիւնձը շինելու սկը-
սիլ , կրաջուրը աղէկ մը շարժելով որ
ամանին տակը նստած կիրերը խառ-
նուին , մէկէն կը պարպես բոլոր ջուրը .
ետքը այդ կենդանական գոյացութիւն
ները կողովներու մէջ կը լեցընես ու
լաւ մը կը լուաս , շատ անգամ մաքուր
ջրոյ մէջէն անցընելով ու խառնելով , և

1 ՏՃ. Սիւիւր : 2 ՏՃ. Դուրգու :

կամ որ աւելի լաւ է, վազուկ ջրոյ մը տակ բռնելով, և ատեն ատեն խառնելով ինչուան 24 կամ 36 ժամ:

Ատքը գետնին վրայ որչափ որ կարելի է քիչ թանձրութեամբ տարածելու է որ օդ տեսնան. ու այնպէս երկու, իրեք օր թողու է՝ 12 ժամու մէջ հեղ մը կամ երկու հեղ խառնելով ու տակն ու վրայ դարձնելով:

Իսկ եփելու կերպն ալ այս է. նախ կաթսայ մը ինչուան բերանը լեցու այս նիւթերովս, նայնպէս ալ ջուրը. և սկըզբան մեղմ կրակի վրայ դիր ու տաքցուր. ետեւէն հետ զհետէ ջերմութիւնը աւելցուր, ինչուան որ սկսի եռալ. և կաթսային մէջի նիւթերը որչափ որ վար իջնան, վրան նորէն լեցուր որչափ որ կ'առնէ կաթսան. և երբեմն երբեմն ալ խառնելու է որ կաթսային տակը չառնէ. ասոր համար լաւ կ'ըլլայ որ մէկ ուրիշ թանազէ՝ կեղծ յատակ մը շինուի երկու ոտքի վրայ կեցած կաթսային մէջ երկու բթաչափ բարձրութեամբ՝ և վրան պարզուտի՝ նման ծակախփներով: Արք աս նիւթերուս աւմէն կտորուանքը ջրոյն մէջ եփելով իրենց առջի ձեւը կը փոխեն և մասամբ ալ կը լուծուին, կրակը մարէ, և խողովակին ծորակին դիմացը աւել մը դիր ու ծորակը բաց ու ուրիշ տաք կաթսայի մը մէջ վազցուր, որն որ տաքութիւնը շուտ ջրուելու համար պէտք է դրուած ըլլայ կամ բրդէ թաղիքի կտորուանքներու վրայ կամ մոխրի վրայ և կամ ածխոյ փոշոյ վրայ: Այս երկրորդ ամանին մէջն ալ նորէն բնականապէս դիրտը կաթսային տակը կը նստի. քիչ մը ատեն անցնելէն ետեւ երբ որ սոսինձին ջուրը այնչափ կը պսղի որ կրնաս մատդ մէջը խոթել, նորէն մաղէ անցընելով 3, 4 բթաչափ բարձրութեամբ պղտի սնտուկներու մէջ կը լեցընես և զովկեկ տեղ մը կը դնես:

Տասը կամ տասներութը ժամուան մէջ սոսինձը կը կապէ թանձր բխտի նման. այն ատենը սնտուկներուն մէջէն

1 ՏՃ. ԹԵԼԵԿԷ:

2 ՏՃ. ԲԵԼԻԷ:

պէտք է հանել. նախ բարակ թրջած դանակի մը ծայրով սնտուկներուն բոլոր տիքէն բաժնէ և պղնձէ թելով մըն ալ սնտուկին տակէն բաժնէ: Այսոր համար երկու բարակ երկրթէ կամ փայտէ գաւազաններու ծայրերուն վրայ պղնձէ թելին երկու ծայրերէն հաստատելու է, ու թելը սնտուկին լայնքովը ձգտած, այնպէս սնտուկին մէջը խոթելով՝ այն ձգտած թելով սոսնձին տակը սնտրկէն բաժնելու է: Այլէ վերջը թրջած սեղանատախտակի մը վրայ դարձու սոսինձը, ու 4 կամ 8 գծաչափ թանձրութեամբ բարակ հաւասար թերթեր կտրտէ՝ նայնպէս պղնձ թելով: Այսպէս կտրտած փռէ վարմի պէս ցանցաւ լաթի վրայ. որոնք պէտք է ըլլան մաղի պէս քառակուսի շրջանակներով շինած. ետքը աս շրջանակները պէտք է հով բանեցող տեղ մը վրայէ վրայ հորի զոնաբար շարել՝ աստիճանաւոր յենարաններ շինելով. որոնց վրայ երկու կողմէն շրջանակները իրենց երկու եզերքներովը հանգչին. ամէն մէկուն իրարմէ հեռաւորութիւնը 3, 4 բթաչափ ըլլայ, ու երբեմն երբեմն ատ թերթերը պէտք է դարձնել: Այսանկով կը չորման կ'ըլլան սոսինձ, զորն որ աւելի շատ կը գործածեն ատաղձագործները՝ դիպակագործները, խոյրարարները, թղթագործներն ու նկարիչները, և այլն:

Իսկ կաթսային տակը անրոյժ մնացած դիրտի մասունքը բանի բերելու համար՝ նոյն կաթսային մէջ նորէն եռացած ջուր լեցու, այնչափ որ մէջի եզած նիւթերը ծածկէ. ասոր համար առջի գործողութեանդ ատենը վառարանիդ վրայ ուրիշ կաթսայով ալ ջուր պէտք է դնես, որ միշտ աւանց ատեն կորսնցընելու մէկէն պատրաստ եռացած ջուր գտնաս, որպէս զի աս երկրորդ գործողութիւնդ թէ շուտով և թէ դիւրաւ կարենաս ընել: Այսպէս իրեք ժամ թող կրակի վրայ որ մէջի նիւթերը սաստիկ եռալով լուծուին. անկէ պէրջը պարպէ և առջի անգամուան կերպով

1 ՏՃ. ՏՕՂԲՈՒՅԷ:

պաղէցուր , և այս երկրորդ աստիճանի ստիճանն էր լայն . բայց աւելի լաւ է որ դեռ չպարպած՝ դգալ մը առնես աս հեղանիւթէն ու քառորդ մը օդի դնես . թէ որ այսչափ ատենուան մէջ թանձրանայ բխտի դառնայ , ապահովապէս վերոյիջեալ գործողութիւնդ կրնաս առաջ տանիլ :

Ետքը կաթսային դիրտը լուարու համար՝ մէջը եռացած ջուր լեցու ինչուան կաթսային $\frac{3}{4}$ բարձրութիւնը , և աս հեղանիւթը երկու ժամ եռացու , և ետքը որչափ որ ծորակէն կրնայ վազել՝ վազցու . իսկ մնացած դիրտն ալ հանէ կաթսային մէջէն ու սաստիկ ճնշէ , հասարկեկ լաթէ պարկերու մէջ լեցուցած՝ տափակ տախտակի մը տակ դնելով , վրան ալ մեծ քար մը և կամ ուրիշ ծանրութիւն մը : Երանկով այս վերջի վազածը ու ճնշմամբ դիրտէն հանածըդ ալ մէկտեղ , ուրիշ նորէն շինելու ատեն մէկտեղ կը խառնես : Իսկ այս գործողութեանց ատեն գործածած ա-

մաններդ ու գործիքներդ պէտք է ամէն անգամ լաւ լուարու մաքրել :

Իսկ այն դիրտը զորն որ ձգվելով կըրցածիդ չափ մնածուծաւոր հիւթը մէջէն վազցուցիր , երկրի համար սքանչելի պարարտութիւն կ'ըլլայ :

Երայնպէս աս վերի ըսած կերպով նաև կերակրեղինաց մէջ գործածելու համար բխտի կրնաս պատրաստել , միայն թէ աս բանիս համար գործածելու ախոնդանքները նոր մորթած կենդանիէն հանուած ըլլան , և այն ալ միայն խոյերէ , կովերէ , հորթերէ , այծերէ , ոչխարներէ , ճագարներէ :

Եւս վերջի գործողութեանս համար պէտք է աս գոյացութիւնները դեռ կաթսային մէջ լուծելու չգրած՝ եռացած ջրով լաւ մը լուար :

Հոս օրինակի համար դնենք մէկ ձիու մը սատակի ամէն մէկ մասանց կշիւքն ու դինը միջին չափով մը , ինչպէս որ Կաղղիա կը ծախուի :

	ՀՈՒՅ	ՏՐԱՄ	ՂՈՒՇ
Նոր սկրզած մորթ կամ թեթև կրաջրէ անցուցած երկայն ու կարճ բաշէր	18		80
Եփած ու չորցուցած ու փոշիացուցած արիւն	—	200	4
Պայտ ու բևեռ	5	100	16
Փոշի դարձուցած կճղակ	—	300	15
Աղիք ու բոլոր ախոնդանք	5		6
Ձգանք կամ ջիղք կրաջրէ անցուցած ու չորցուցած	—	150	1
Հալեցուցած ճարպ	16	—	150
Ջրոտ միս	70	—	160
Մաքրուած ոսկրտախիք	30	—	12

Բովանդակ գինը 445

Անցեալ ամսուսն դրուած կեղծագրութիւնն է

Մար—գորակ—ն—կալ—է—բարձ—ր—գահ—ու—ալիք—բաժ—ինն—որայ

Մարդ որ ակնկալէ բարձր գահու՝ լալիք բաժին նորայ :

